ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ, ՄԱՅԹԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. Աշխատանքի անվանումը	*Ջերմուկ քաղաքի փողոցների, մայթերի ասֆալտապատում*
Ընդհանուր նկարագրություն	*Անհրաժեշտ է՝* ✓ *Ջերմուկ քաղաքի բակային տարածքների և ճոպանուղու ավտոկայանատեղիի ասֆալտապատում*
Ներկայացվող հիմնական պահանջներ, տեխնիկական առաջադրանք	Նախատեսվում է 1. Ասֆալտապատել Ջերմուկ քաղաքի Զախափնյա թաղամասի թիվ 2, 3 և 4 բազմաբնակարան բնակելի շենքերի հետնամասերը՝ ընդհանուր 4400քմ մակերեսով, 23Ա և 23Բ շենքերի հետնամասերը՝ 1500քմ մակերեսով՝ տեղադրելով 100գծ/մ եզրաքար, 26Ա և 26Բ շենքերի մայթերը՝ 100քմ մակերեսով, վերակառուցել «Զատիկ» մանկապարտեզի շինության առջևի հենապատը՝ 290 գծ/մ՝ 330քմ, ասֆալտապատել 120քմ մայթը, տեղադրել 100մ եզրաքար, ասֆալտապատել Զախափնյակ 1-ին շենքի բակը՝ 2500քմ մակերեսով, տեղադրել 950գծ/մ եզրաքար, կատարել դիտահորերի և ջրորսիչների ծածկի սալերի ապամոնտաժում և մոնտաժում: Հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի համար նախատեսել համապատասխան հարմարություններ: Կառուցվող օբյեկտի ռիսկայնության աստիճանը՝ III կատեգորիա: 2. Ասֆալտապատել Ջերմուկի քաղաքային ճոպանուղու ավտոկայանատեղին՝ 2500 քմ մակերեսով, ենթակայանից իջնող աստիճանավանդակի եզրով տեղադրել բազրիք՝ 70մ: Հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի համար նախատեսել համապատասխան հարմարություններ: Կառուցվող օբյեկտի ռիսկայնության աստիճանը՝ III կատեգորիա:
Ընդհանուր դրույթներ	Աշխատանքային նախագիծը կազմվում է՝ ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան, ճարտարապետահատակագծային և նախագծման առաջադրանքներին, թերությունների ակտին համապատասխան: **Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:** **Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմելիս առաջնորդվել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի փետրվարի 15-ի N19-Ն և 2009 թվականի ապրիլի 3-ի N35-Ն հրամաններով: Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվում են փորձաքննության դրական եզրակացությամբ:** **Նախագիծը կազմվում, իսկ փորձաքննությունն իրականացվում է լիցենզավորված կազմակերպության կողմից:** Նախատեսվում է հեղինակային հսկողություն, նախագծողը իրականացնում է հեղինակային հսկողություն աշխատանքների կատարման ողջ ընթացքում: ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման համաձայն նախագծողը՝ ա/նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բ/ ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի /կոնստրուկցիաներ և այլն/ և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները, գ/ ներկայացնում է աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները, դ/ նախագծնախահաշվային փաստաթղթերը ներկայացնում է պատվիրատուին թղթային՝ 5 օրինակից և էլեկտրոնային տարբերակով, ե/ ներկայացնում է ըստ առանձին աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը, ինչպես նաև, ներկայացնում է աշխատանքների կատարման ծավալաթերթ՝ էլեկտրոնային տարբերակով, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը,

	ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%): Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմված են 2 մասից՝ **-Ճարտարապետաշինարարական մաս**. Ներառում է Ելակետային տվյալներ և նախագծային փաստաթղթեր /հատակագիծ /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճեն/, տեխնիկական բնութագիր, ճարտարապետահատակագծային առաջադրանք, լիցենզիա /քաղաքաշինական փաստաթղթերի մշակման բնագավառ՝ բնակելի, հասարակական և արտադրական ոլորտ/, տեխնիկական վիճակի հետազննության եզրակացություն /ըստ անհրաժեշտության/, ընդհանուր բացատրագիր, հատակագծեր, շինարարության և քանդման կազմակերպման նախագծեր, հիմնական շինարարական նյութերի, կոնստրուկցիաների ամփոփագրեր, մասնագրեր, աշխատանքների կատարման ուղեցույց, աշխատանքների կատարման ժամանակացույց, աշխատանքային գծագրեր, աշխատանքային ծավալներ/, բացատրագրեր, **-Նախահաշվային մաս՝** ամփոփ, օբյեկտային, լոկալ նախահաշիվներ Վերանորոգման աշխատանքների ընթացքը համապատասխանեցվում է պատվիրատուի հետ: Աշխատանքային նախագծի ընդհանուր փաթեթը ներկայացնել հայերեն լեզվով: Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառմամբ, ընթեռնելի:
Հիմնական պարտականություն ներ և պահանջներ	***Հիմնական պարտականություններ՝*** 1.հետազննման աշխատանքների իրականացում, 2.նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, ***Հետազննման վերաբերյալ պահանջներ՝*** • հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով, • հետազննման ընթացքում իրականացնել շինության առկա վիճակի տեսանկարահանում: ***Նախագծի նկատմամբ պահանջներ*** • Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, քաղաքաշինական նորմերին: • Նախագծի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝ ***Համաձայնեցումներ՝*** • քաղաքաշինական փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական, • **նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծային լուծումները, ապա էսքիզային նախագիծը համաձայնեցնել համայնքի ղեկավարի և համայնքապետարանի գլխավոր մասնագետ-ճարտարապետի հետ, որից հետո տրամադրել վերջնականը:** • **համայնքի ղեկավարի հետ համաձայնեցնել շինարարական աղբի տեղերը**
Նորմատիվային պահանջներ	• Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան: • Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան: • Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերի:

Համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու՝ Ստեփանոս Վարդանյան
Հեռ.՝ 077.57.75.60, էլ.փոստ՝ Vardanyan.Stepan@mail.ru

Համայնքի ղեկավար՝ **Վահագն Արսենյան**

Կ.Տ.